Հարցաթերթ
Աշխարհագրություն առարկայի օլիմպիադայի
մարզային փուլի – 2022-2023 ուս. տարի
/տևողությունը – 120 րոպե/
9 – րդ դասարան

1. Պնդումներից յուրաքանչյուրի համար նշել՝ ճիշտ է, թե՝ սխալ 1միավոր

ա. ՀՀ տարածքում հրաբխային լեռնավահանների և սարավանդների մարզին չպատկանող ամենաբարձր գագաթը Կապուտջուղն է

բ. Սևանա լճի ավազանում ամենաբարձր գագաթը Վարդենիսն է

գ. ՀՀ հյուսիսային ծալքաբեկորավոր լեռնաշղթաների և միջլեռնային գոգավորությունների մարզի ամենաբարձր գագաթը Թեղենիսն է

դ. ՀՀ հրաբխային լեռնավահանների և սարավանդների մարզի ամենաբարձր գագաթը Աժդահակն է

2. Պնդումներից յուրաքանչյուրի համար նշել՝ ճիշտ է, թե՝ սխալ 1միավոր

ա. Աշխարհի բնակչության բնական աճի գործակիցը այժմ ավելի ցածր է քան 1960ական թթ.

բ. Աշխարհի բնակչության բացարձակ բնական աճը այժմ ավելի բարձր է քան 1960ական թթ.

գ. Զարգացած երկրներին հիմնականում բնորոշ է վերարտադրության առաջին տիպը

դ. Զարգացող երկրներին հիմնականում բնորոշ է ժողովրդագրական ձմեռը

3. Նշված եզրույթներից ո՞րը չի առնչվում սառցին կամ սառցադաշտերին 1միավոր

ա. կրկես բ. լագուն գ. այսբերգ դ. լեզվակ

4. Նկարագրով որոշել պետությունը 1միավոր

Այս հանրապետությունը զբաղեցնում է համանուն կղզու տարածքի մոտ 5/6-ը և ցամաքային սահման ունի ընդամենը մեկ պետության հետ, որը միապետություն է: Եզակի երկրներից է, որի բնակչության թիվը վերջին ավելի քան 200 տարվա կտրվածքով գրեթե չի փոփոխվել: Ներկայումս մարդկային զարգացման համաթվի ցուցանիշով աշխարհի ամենաբարեկեցիկ երկրներից մեկն է:

5. Ո՞ր օդային զանգվածն է տիրապետող (գրել միայն անունը).

ա. հարավային կիսագնդի մերձհասարակածային գոտում հունիս-օգոստոս ժամանակահատվածում 1միավոր

բ. մերձարկտիկական գոտում դեկտեմբեր-փետրվար ժամանակահատվածում 1միավոր

6. Խնդիրներ

ա. Կազմվել է 1:1000000 մասշտաբի ՀՀ քարտեզ, որի վրա Սևանա լիճը զբաղեցնում է 12.8սմ^2 տարածք: Որոշել Սևանա լճի մակերեսը համաձայն այդ քարտեզի՝ համարելով, որ քարտեզում աղավաղումներ չկան: 1միավոր

բ. Ա երկրի բնակչության թիվը 5մլն մարդ է, իսկ ապահովվածությունը պղնձով 2 անգամ մեծ է Բ երկրից: Որքա՞ն է երկրներից յուրաքանչյուրի ապահովվածությունը պղնձով, եթե Ա երկրի պղնձի պաշարը 10մլն տ է: 1միավոր

7. Թվարկել

ա. չորս ազգային պարկ ՀՀ տարածքում 1միավոր

բ. չորս գաճաճ պետություն Հարավային Եվրոպայում 1միավոր

8. Դասավորել

ա. ռելիեֆի նշված միավորները ըստ բացարձակ բարձրության աճող հաջորդականության. Ամազոնի, Լավրենտինյան, Մահվան հովիտ, Մերձկասպյան 1միավոր

բ. նշված պետությունները ըստ ցամաքային սահմաններով սահմանակից երկրների քանակի աճող հաջորդականության. Ղազախստան, Լիխտենշտայն, Նորվեգիա, Գամբիա 1միավոր

9. Բացատրել՝ հարցադրումներից յուրաքանչյուրի համար ներկայացնելով մեկ հիմնավոր պատճառ

ա. 1990ական թթ. Հայաստանում անասնապահությունը մեծ անկում ապրեց: Ինչու՞ 1 միավոր

բ. Վերջին երկու տասնամյակում, համեմատած ԱՄՆ արևելյան նահանգների հետ, արևմտյան նահանգների տնտեսական աճը արագացել է: Ինչո՞վ է դա պայմանավորված 1միավոր

10. Դիտարկեք միտումը և պատասխանեք հարցերին

Համաշխարհային ծովային բեռնափոխադրումները (մլրդ տ) բեռնախցիկներով (կոնտեյներ)

Տարի	1980	1985	1990	1995	2000	2005	2010	2015	2020
Զանգված	0.1	0.15	0.2	0.4	0.6	0.95	1.2	1.6	1.85

ա. ո՞ր հնգամյակում է դիտվել բեռնափոխադրումների զանգվածի առավել բարձր բացարձակ աճ և ո՞ր հնգամյակում՝ առավել բարձր հարաբերական աճ 0.5միավոր

բ. Նշել բեռնախցիկների սպասարկման ծավալով երկու խոշորագույն նավահանգիստները աշխարհում 0.5միավոր

գ. Ներկայացնել բեռնախցիկներով փոխադրումների երկու առավելություն 1միավոր

11. Նշել պատասխանը և հիմնավորել

ա. Հյուսիսային և հարավային կիսագնդերից որու՞մ է միջին տարեկան ջերմաստիճանը ավելի ցածր և ինչու՞ 1միավոր

բ. Հնդկական, Խաղաղ և Ատլանտյան օվկիանոսներից որի՞ ջրի մակերևութային շերտի ջերմաստիճանն է ամենաբարձրը և ինչու՞ 1միավոր

12. Գտնել կետերը և համապատասխանեցնել քարտեզում նշված համարներին (օր.՝ Ա-7)

ա. Ա կետը գտնվում է հյուսիսային արևադարձի և հյուսիսային բևեռային շրջագծի ուղիղ մեջտեղում՝ նույն միջօրեականի վրա, ինչ Երևանն է 0.5միավոր

բ. Բ կետը գտնվում է Լոնդոնի և Երևանի միջօրեականների ուղիղ մեջտեղում՝ հասարակածի վրա 0.5միավոր

գ. Գ կետը գտնվում է Կիտոյի զուգահեռականի և Սթիփ Փոյնթ հրվանդանի միջօրեականի հատման կետում 0.5միավոր

դ. Դ կետը գտնվում է հարավային արևադարձի և հարավային բևեռի ուղիղ մեջտեղում՝ Ռաս Հաֆուն հրվանդանի միջօրեականի վրա 0.5միավոր



Առարկայական հանձնաժողովի նախագահ՝ Վ. Ասատրյան